Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.20/[418584]-17

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄՈՏ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՆ ԵՎ 14-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՀ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ

քաղ. Երևան

Խորհրդի անդամներ՝

Տ. Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Լ. Մնացականյան	Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի գործադիր տնօրեն
Ե. Նաեր	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «ՓՄՁ զարգացումը Հայաստանում» ծրագրի ղեկավար
Դ. Սարումովա	Եվրոպական բիզնես ասոցիացիայի գործադիր տնօրեն
Ա. Մխիթարյան	«Ագրոլիզինգ ԼՎԿ» ՍՊԸ-ի խորհրդի նախագահ
Ա. Բազիկյան	«ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Հ. Ավագյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Գ. Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Է. Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն գործադիր տնօրեն
Ա. Ալեքսանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
Ց. Գևորգյան	«Վաճառականների միություն» ՀԿ-ի նախագահ
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ

Ա. Հարությունյան	ՀՀ հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի փոխնախագահ
Վ. Համբարձումյան	«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ն. Քեվո	«Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպության նախագահ

Մասնակիցներ՝

Ա. Խաչատրյան	ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Դ. Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ. Քոչարյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Հ. Նավասարդյան	ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավար
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Է. Ներսիսյան	ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական
Ա. Արարատյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Ա. Վարդևանյան	ՀՀ վարչապետի ավագ օգնական
Հ. Զոհրաբյան	ՀՀ վարչապետի օգնական
Ծ. Սողոմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հ. Հովհաննիսյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության և զարգացման վարչության գլխավոր մասնագետ
Կ. Գևորգյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետի տեղակալ

Մ. Բաբայան	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «ՓՄՁ զարգացումը Հայաստանում» ծրագրի խորհրդատու
Գ. Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Վ. Կամարյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ն. Մուսայելյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Երևանի գրասենյակի վերլուծուբան
Ս. Միքայելյան	Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի լոբբիստ

1. ՀՀ Հարկային Օրենսգրքում տեղ գտած ՓՄՁ-ներին առնչվող խնդրահարույց դրույթների քննարկման անհրաժեշտության վերաբերյալ
   1.1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված հարկային օրենսգրքի փոփոխությունների նախագծում ներառված հարցեր
   1.2. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված հարկային օրենսգրքի փոփոխությունների նախագծում չներառված հարցեր

(Փայլակ Թադևոսյան, Հակոբ Ավագյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ՀՀ ֆինանսների նախարարին՝

ա. ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխությունների նախագծում նախատեսել դրույթ ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում հարկային պարտավորությունների առաջացումը նախատեսելով այն դեպքերում, երբ այդպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային մարմինը հայտնաբերելուց հետո ծանուցել է հարկ վճարողին,

բ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի հետ քննարկել և վերանայել ՀՀ հարկային օրենսգրքի 421-րդ հոդվածով սահմանված տուգանքի չափն այն դեպքերի համար, երբ տնտեսավարողն արտոնագրային վճարը վճարել է, սակայն համապատասխան հայտարարությունը ներկայացրել է ժամկետի խախտմամբ,

գ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի և շահագրգիռ մարմինների ղեկավարների մասնակցությամբ ևս մեկ անգամ քննարկել որպես ժառանգություն ստացված գույքի առնչությամբ հարկային պարտավորությունների առաջացման հարցը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություն,

դ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի և շահագրգիռ մարմինների ղեկավարների հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկել ՀԴՄ-ի շահագործման կանոնները տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտման դեպքի համար նախատեսված պատասխանատվությունը՝ անհրաժեշտության դեպքում նախատեսելով մեկ՝ սակայն առավել խիստ պատասխանատվության միջոց,

ե. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի հետ համատեղ քննարկել ՀԴՄ կտրոնի վրա ստացողի ՀՎՀՀ տպելու և արդյունքում այն, որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ դիտարկելու հնարավորության հարցը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություն,

զ. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի հետ համատեղ քննարկել հանրային սննդի ոլորտում փոքր և միջին ձեռնարկատիրական կազմակերպությունների արտոնագրային վճարի կիրառման համար սահմանված տարածքի մակերեսի առավելագույն շեմի վերանայման հնարավորությունը և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան առաջարկություն,

է. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի հետ համատեղ մեկ անգամ ևս քննարկել շրջանառության հարկ վճարող հանդիսացող կազմակերպության կողմից իր բաժնետեր ֆիզիկական անձին

շահաբաժին վճարելու վերաբերյալ բարձրացված խնդիրը և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել դիրքորոշում.

2) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի և շահագրգիռ մարմինների ղեկավարների հետ մեկ անգամ ևս քննարկել գինեգործության ոլորտում հատուկ հարկային ռեժիմ կիրառելու հնարավորության հարցը և ներկայացնել միջազգային փորձի վրա հիմնավորված դիրքորոշում.

3) ընդունել ի գիտություն, որ ԱԱՀ-ի շեմի վերանայման վերաբերյալ առաջարկությունը համարվում է անընդունելի:

2. ՀՀ-ում լիզինգի որպես այլընտրանքային ֆինանսական գործիքի զարգացման անհրաժեշտության վերաբերյալ

(Իզաբելա Հովհաննիսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ առաջարկել ՎՀԵԲ Գործարարության աջակցման գրասենյակի իրավաբան Իզաբելա Հովհաննիսյանին՝

1) ևս մեկ անգամ քննարկել Լիզինգի առարկայի ամորտիզացիայի հաշվարկի համար առավել արագացված սանդղակի կիրառման նպատակահարմարությունը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել փոխհամաձայնեցված առաջարկություն.

2) մեկշաբաթյա ժամկետում Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանի մոտ քննության առնել ֆինանսական լիզինգի դեպքում գույքահարկի պարտավորությունները լիզինգառուին փոխանցելու հետ կապված հարցերը.

3) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ներկայացնել նախագծի վերջնական փոխհամաձայնեցված տարբերակը:

3. Նախազգուշացումը հարկերի կամ հաշվարկների ուշացման համար որպես վարչական տուգանք սահմանելու վերաբերյալ

(Հակոբ Ավագյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝

1) ևս մեկ անգամ քննարկել և հստակեցնել հարկային իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվության տեսակներն ու չափերը, մասնավորապես, հստակ տարանջատել օրինակ՝ հաշվառում չվարելու և հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի մեջ կեղծ տվյալներ մտցնելու դեպքերը՝ վերջիններիս համար նախատեսելով պատասխանատվության առավել կոշտ մեխանիզմներ.

2) քննարկել բյուջեի վրա բացասական ազդեցություն չունեցող խախտումների դեպքում վարչական տուգանքի մեղմացման հարցը՝ առաջին խախտման համար սահմանելով նախազգուշացում և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն:

4. ՀՀ քրեական օրենսգրքում առկա մի շարք տնտեսական հանցագործությունների ապաքրեականցման վերաբերյալ

(Իզաբելա Հովհաննիսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ քրեական օրենսգրքում առկա 4 հոդվածների /210-213-րդ հոդվածներ/ ապաքրեականցման վերաբերյալ առաջարկությանը.

2) առաջարկել ՎՀԵԲ Գործարարության աջակցման գրասենյակի իրավաբան Իզաբելա Հովհաննիսյանին՝ մեկամսյա ժամկետում գործարար համայնքի ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել ՀՀ քրեական օրենսգրքում առկա տնտեսական հանցագործությունների ապաքրեականցման վերաբերյալ առաջարկությունը, անհրաժեշտության դեպքում նախագծում ներառել այլ հոդվածների ապաքրեականացման վերաբերյալ դրույթներ.

3) նախագծի վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն:

5. Այլ հարցեր

(Փայլակ Թադևոսյան, Հակոբ Ավագյան, Դիանա Սարումովա, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկման առարկա դարձնել «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ Փայլակ Թադևոսյանի կողմից բարձրացված՝ ՀԴՄ կտրոնների շահագործման կանոնների խախտման տեխնիկական սխալների դեպքում պատասխանատվության մեղմացման հարցը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություններ.

2) քննարկել «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն Հակոբ Ավագյանի կողմից ներկայացված առաջարկությունը՝ ՓՄՁ ոլորտին առնչվող օրենսդրական փոփոխությունները ՀԿ-ի միջոցով ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ փորձնական կիրառման հնարավորության հարցի վերաբերյալ և ըստ այդմ ներկայացնել դիրքորոշում.

3) Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հետ համատեղ քննարկման առարկա դարձնել Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի գործադիր տնօրեն Դիանա Սարումովայի կողմից բարձարացված՝ տեղական տուրքերի չափերի և դրանց հաշվարկման մեխանիզմների հետ կապված հարցը և ըստ այդմ ներկայացնել դիրքորոշում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ